

## Տեղի ունեցավ Կոտայքի մարզպետին առընթեր Երիտասարդական խորհրդի հերթական նիստը

Կոտայքի մարզպետարանում տեղի ունեցավ մարզպետին առընթեր Երիտասարդական խորհրդի հերթական նիստը, որը վարում էր Կոտայքի մարզպետի տեղակալ Առնակ Ավետիսյանը:

Մինչ օրակարգին անցնելը, Առնակ Ավետիսյանը ներկաների ուշադրությունը սևեռեց առաջիկայում սպասվող «Իմ քայլը հանուն Կոտայքի մարզի» ներդրումային համաժողովին՝ առաջարկելով որպես կամավորներ ընդգրկվել և ակտիվորեն մասնակցել համաժողովի ընթացիկ աշխատանքներին:

Այնուհետև խորհրդի անդամներն անցան նիստի օրակարգային հարցերի քննարկմանը:

Հարցերից առաջինը խմբերի կողմից կատարված աշխատանքների ամփոփումն էր:

Այնուհետև սոցիալական հարցերի և առողջապահության խմբի ղեկավար Արգիշտի Մովսիսյանը ներկայացրեց ապրիլի 6-7 ը սպասվող ֆորումը, որի շուրջ էլ ակտիվ քննարկում ծավալվեց: